

**ՀՀ ֆինանսների նախարարություն**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27/4**

**7 հուլիսի 2015 թ.**

Քննարկվեց «Վանտիգ» ՍՊԸ 10.06.2015 թ-ի գրությամբ բերված միջնորդությունը կատարված վրիպակը որպես խախտում դիտարկելու հետևանքով հաշվարկված պարտավորությունները վերանայելու վերաբերյալ:

**«Վանտիգ» ՍՊԸ գրությունում բերված փաստարկները.**

«Վանտիգ» ՍՊԸ-ն հայտնում է, որ հաշվառված է Վանաձորի տարածքային հարկային տեսչությունում և, որ 2014թ.-ին սահմանված ժամկետում ներկայացրել է 2013թ.-ի շահութահարկի տարեկան հաշվետվությունը: Ներկայացված հաշվետվության մեջ տեղի է ունեցել մեխանիկական վրիպակ, այն է՝ «2013թ.» փոխարեն գրվել է «2014թ.»:

Վրիպակի մասին «Վանտիգ» ՍՊԸ-ն տեղեկացվել է 2015թ. ապրիլ ամսին, և անմիջապես ներկայացվել է ճշգրտված հաշվետվություն: Սակայն, 2015թ.-ի հունիսի 8-ին ընկերությանը տեղեկացվել է, որ վերը նշված վրիպակի պատճառով հաշվարկվել են տույժեր 2058.5 հազ. դրամի չափով, որն էլ պակասեցվել է ընկերության կողմից կատարված շահութահարկի կանխավճարից:

Ընկերությունը նշում է, որ ոչ մի հարկատեսակի գծով չունի չկատարված հարկային պարտավորություններ:

Ելնելով վերոգրյալից՝ «Վանտիգ» ՍՊԸ-ն խնդրում է վերը նշված վրիպակը որպես խախտում չդիտարկել:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Վանտիգ» ՍՊԸ-ն 2014թ.-ին սահմանված ժամկետում ներկայացրել է 2013թ.-ի շահութահարկի տարեկան հաշվարկը, որում, սակայն, տեղ է գտել մեխանիկական վրիպակ, այն է՝ «2013թ.» փոխարեն նշվել է «2014թ.»:

Վրիպակի մասին «Վանտիգ» ՍՊԸ-ն տեղեկացվել է միայն 2015թ. ապրիլ ամսին, որից հետո ընկերության կողմից ներկայացրել է ճշգրտված հաշվարկ:

Նշված վրիպակի պատճառով Վանաձորի ՏՀՏ կողմից հաշվարկվել են տույժեր, որոնք էլ պակասեցվել են ընկերության կողմից կատարված շահութահարկի կանխավճարի գումարներից:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն. «Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե

նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ 2013 թ-ի համար ներկայացված շահութահարկի հաշվարկում հաշվետու ժամանակաշրջանը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով, ըստ էության, կատարված են:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով, Հանձնաժողովը գտնում է, որ «Վանտիգ» ՍՊԸ կողմից 2013 թ-ի համար ներկայացված շահութահարկի հաշվարկում տեղ գտած մեխանիկական սխալը չի կարող հիմք հանդիսանալ ընկերության նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների հաշվարկման համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո ր ո շ ու մ է՝

«Վանտիգ» ՍՊԸ 10.06.2015 թ-ի գրությամբ բերված միջնորդությունը՝ կատարված վրիպակը որպես խախտում դիտարկելու հետևանքով հաշվարկված պարտավորությունները վերանայելու վերաբերյալ, բավարարել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ